Առաջարկություններ ու դիտարկումներ
«ՇՊՀ» հիմնադրամի ռազմավարական ծրագրի (2023-2027թթ.)
վերաբերյալ

1. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) առաքելությունը:** Համալսարանի առաքելությունը՝
   - ամբողջապես չի ներկայացնում այն հնարավոր ծառայություններն ու ապրանքները, որոնք փաստացի տրամադրվում և(կամ) կարող են տրամադրվել:
   - կշահեր, եթե երևային կազմակերպության մրցակցային առավելությունները կամ յուրահատկությունը, որով այն տարբերվում է մրցակից կառույցներից: Նկատենք, որ 21-րդ դարում բուհի մրցակիցներն արդեն բավականին շատ են, ու դրանք միայն բարձրագույն ուսումնական հաստատությունները չեն:
   - շեշտադրում է բուհի մինիմալիստական ոճի ձգտումները կամ թե որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստումը: Ես համոզված եմ, որ մենք միայն մասնագետ չենք պատրաստելու, այլ պատրաստելու ենք նաև կիրթ, հաջողակ քաղաքացի: Համալսարանը չի ձգտում օտարերկրացիների ներգրավման և, իհարկե, չի հավակնում լինել մրցունակ դիրքում հեղինակավոր վարկանիշային սանդղակներում և(կամ) միտում չունի դրական ուղղությամբ բարձրացնելու սեփական կորպորատիվ հեղինակությունը:
   - որպես թիրախային տարածքներից մեկը՝ Ջավախքը, ընտրելու դեպքում և նույն փաստաթղթի, մասնավորապես, տեսլականում՝ սփյուռքում հայապահպանությանը օժանդակող կազմակերպություն ներկայանալը՝ կրթամշակութային ծրագրերի կազմակերպման և իրականացման միջոցով, առաջ է բերում հակասություն: Իսկ սփյուռքի հայկական գաղթօջախներում հայապահպանության օժանդակման համար վերցված՝ հայկական ոչ նյութական մշակութային արժեքները հանրահռչակող էլեկտրոնային ձեռնարկը, կրկին մանր արդյունք է:
   - խոսում է կազմակերպության արտաքին միջավայրի մասին, որի մեջ մտնում է նույն ՀՀ աշխատաշուկան՝ իր փոփոխվող պահանջներով: Հետևաբար, «և»-

ի կիրառումը «փոփոխվող արտաքին միջավայրի և ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ» հատվածքում ավելորդ է: Եվ կհավելեի, որ համալսարանը ոչ միայն պետք է առաջնորդվի աշխատաշուկայի պահանջներով, այլ ինքն էլ կարող է բարելավել աշխատաշուկայի պահանջները կամ թե լինել թելադրողի դերում:

- չի ներկայացնում այլ կառույցների հետ համագործակցային կապեր ստեղծելու կարևորության մասին:

2. **Համալսարանի տեսլականը:** Տեսլականում արդեն երևում է, որ բուհը ձգտում է լինել մրցունակ գլխավորապես ՀՀ տարածքում, մինչդեռ միջազգային տիրույթում՝ լավագույն դեպքում ինչ որ մասնակի գործընթացներում ընդգրկված: Նույն տեսլականում նոր կապեր ձևավորող, սեփական սոցիալական կապիտալը հզորացնող բուհի մասին խոսք չի կարող գնալ: Նաև տեսլականում կուզենայի տեսնել համալսարանի աշխատողների ցանկալի հեռանկարը և սովորող կազմակերպության վերաբերյալ պարբերության մեջ ես դա չտեսա:
3. **ՇՊՀ-ի արժեքները:** Որպես արժեքներ կավելացնեի վստահությունը, նորարարությունն ու ստեղծարարությունը:
4. **Համալսարանի ճանապարհային քարտեզը:** 1-ին նպատակում կավելացնեի «հետազոտությունը», որը կարևորվում է փաստաթղթի տարբեր հատվածներում:
5. «Աշխատաշուկայի և որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակների պահանջներին համահունչ նոր, պահանջարկ ունեցող մասնագիտությունների ներդրում և պահանջարկ չունեցող մասնագիտությունների օպտիմալացում» գործողության վերաբերյալ կնշեի, որ այսօր համալսարանում ունենք նման մասնագիտություններ, որոնք ճիշտ մատուցման, գովազդման դեպքում ունեն նույն ՀՀ աշխատաշուկայում պահանջված լինելու ներուժ: Նույն մաթեմատիկների, ֆիզիկների, քիմիկների և այլ բնագետ-մասնագետների կարիքն արդեն արդիական է: Առաջնորդվելով հավատարմագրման հանձնաժողովի 2022թ.-ի սեպտեմբերի 15-ի թիվ 72 որոշման դրույթներով՝ համալսարանն ունի լուրջ անելիքներ գործող ՄԿԾ-ների բարելավման հարցում:

6. ՌԾ-ի 8-րդ էջում, 14-րդ էջում հանդիպում ենք «ներքին նորմատիվ իրավական ակտեր» արտահայտությանը: Դա սխալ կլինի թողնել: Համալսարանը չի կարող ունենալ ներքին նորմատիվ իրավական ակտ: Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են՝ 1. Նորմատիվ, 2. Ներքին կամ լոկալ, 3. Անհատական: Համալսարանի ներսում վերջին 2-ն են: Նորմատիվ ակտերին բուհը ենթարկվում է:
7. ՌԾ-ի 10-րդ էջում որպես գործողություն նշվում է ժամանակակից տեխնիկական միջոցների ձեռքբերումը և գրադարանային ֆոնդի աստիճանական թվայնացումը: Որպես կատարողականի ցուցիչ տեսնում ենք ուսումնական նյութ հանդիսացող հիմնական գրականության թվայնացված և շահառուներին ու շահակիցներին հասանելի էլեկտրոնային բազան: «Հիմնական գրականություն» ասվածը 21-րդ դարում հարաբերական է, քանի որ 2021 թվականի գիրքը կարող ենք համարել հին: Ավելին, նոր գրքերը թվայնացնելու և մեր շահակիցներին հասանելի դարձնելու դեպքում կառաջարկեմ խոսել հեղինակային իրավունքների պաշտպանության մասին՝ թեկուզև հպանցիկ ձևով: Հավելեմ, որ խոսվում է 2 լսարանների համակարգչային տեխնիկայով ապահովման, լինգաֆոնային լսարանի վերազինման մասին, ինչը չափազանց գովելի է, բայց կուզենայի, որ համալսարանի ընթերցարանի մասին ևս հիշեինք, որի դռները անընդհատ բաց են համալսարանի առաջադեմ ուսանողների և աշխատողների համար: Ընթերցարանն անգամ յուրահատուկ է նրանով, որ այնտեղ ավանդույթի համաձայն կազմակերպվում են դասեր: Մինչդեռ ընթերցարանի համակարգչային տեխնիկան արդեն հին է և առաջիկա 5 տարում դրանք դուրս կգան կիրարկումից: Հետևաբար, այդ բացը կառաջարկեի լրացնել:
8. Պրոֆեսորադասախոսական կազմին չէր խանգարի լեզվահմացության բարելավումը, ինչը կնպաստեր միջազգայնացման գործընթացների բարելավմանը: Նույն 12-րդ էջում խոսվում է պրոֆեսորադասախոսական կազմի միայն մասնագիտական, մանկավարժական և SS կոմպետենցիաների զարգացմանը միտված վերապատրաստումների իրականացման մասին:
9. Հավատարմագրման հանձնաժողովի 2022թ.-ի սեպտեմբերի 15-ի թիվ 72 որոշման մեջ որևէ խոսք չկա կառուցվածքային փոփոխության մասին: Եվ ՌԾ-ում «կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերն ապահովող

փոփոխված նոր կառուցվածք» ցուցիչը հարցի տեղիք է տալիս: Նույն ներկայիս կառուցվածքում կան և՛ ուղղաձիգ, և՛ հորիզոնական կապեր: Կառուցվածքային փոփոխություն կատարելու դեպքում պետք է նշվի իրականացման օբյեկտիվ հիմքը: Ավելին, կառավարման արդյունավետության բարձրացումը հնարավոր է նաև առկա կառուցվածքի պահպանմամբ:

10. ՌԾ-ի 14-րդ էջում խոսվում է գործող էլեկտրոնային հավելված-հարթակի մասին, որը վերաբերում է իրավական բնույթի փաստաթղթերին: Դրա փոխարեն, կառաջարկեինք այնպիսի էլեկտրոնային ծրագրի ներդրում, որի դեպքում կերևար յուրաքանչյուր փաստաթղթի շարժը: Նույն ուսանողների ուսումնառությանը վերաբերող իրավական փաստաթղթերի համար կա համապատասխան էջ համալսարանի պաշտոնական կայքում: Մնում է, որ ուսանողն իմանա իրեն անհրաժեշտ փաստաթղթի անվանումը և կայքի այդ հատվածի անվանումը:
11. Ոչ ֆորմալ կրթական խորհրդատվական ծառայությունների հատվածի ներդրման անհրաժեշտության հիմքերը անհասկանալի էին: Նաև ցանկալի է, որ ՌԾ-ում հատուկ արժևորվեր համալսարանի պրոֆեսորդասախոսական կազմի երիտասարդացման, ինչպես նաև իրական լավագույնների գնահատման ու պահպանման հարցը:

Քանի որ համալսարանի համար նման կարևորություն ունեցող փաստաթղթի համար հատկացված ժամանակը չափազանց սուղ էր, այս դիտարկումները կատարվել են մեկանգամյա ընթերցման արդյունքում: Հուսով եմ՝ համալսարանի բոլոր ստորաբաժանումների աշխատողների կողմից ներկայացվել են գրավոր առաջարկություններ, որոնք հիմք կծառայեն բարելավված ՌԾ ունենալու համար:

Գրադարան-ուսումնագիտական
խորհրդատվությունների, նորարարությունների և
տեղեկատվական տեխնոլոգիաների
կենտրոնի տնօրեն՝ Թ. Խաչատրյան